ARMENIAN WOMEN FOR HEALTH AND HEALTHY ENVIRONMENT
non-profit, non-governmental organization

Vienna Declaration of Environmental Standards for Healthcare Facilities

CleanMed Europe
The International Healthcare Congress on Sustainable Products and Practices

2004թ. հոկտեմբերի 6-8 Վիեննայում տեղի ունեցավ “CleanMed Europe” առաջին միջազգային առողջապահական կոնգրեսը անվտանգ արտադրանքների և պրակտիկաների վերաբերյալ: “CleanMed Europe”-ն արդեն հսկայական հաջողություն է ունեցել Միացյալ Նահանգներում: Այն ընդգրկում էր շրջակա միջավայրի բարելավմանն ու բուժհիմնարկներին վերաբերող թեմաների լայն շարք և լուսաբանում էր առողջապահության բնագավառում լավագույն պրակտիկաները և նշանակալից հաջողությունների պատմությունը:

- Շրջակա միջավայրի աղտոտվածությունը և մարդու առողջությունը
- Շրջակա միջավայրի առումով անվտանգ առողջապահական հիմնարկներ
- «Կանաչ գնման» իրականացում
- Դեղորայքների վտանգը շրջակա միջավայրի համար
- Պոլիվինիլ քլորիդի այլընտրանքներ
- Թունավոր նյութերի փոխարինում
- Օրգանական սնունդ, մաքրում, ախտահանում, լվացքատուն
- Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր, EMAS, ISO 14001
- Տեղեկատվություն և ուսուցում
- Թափոնների այրման այլընտրանքներ
- Կանաչ և առողջարար շինություններ /նախակոնֆերանսային հավաք/

Կոնգրեսին մասնակցեցին 28 երկրների 300 ներկայացուցիչներ: Ներկայացվեց 60 զեկույց, որոնցից 15-ը HCWH /«Առողջապահություն առանց վտանգ պատճառելու»/ կազմակերպության կողմից: CleanMed-ին Հայաստանը «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» կազմակերպության կողմից ներկայացրել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպությունը: Արդյունքում, Կոնգրեսն ընդունեց Վիեննայի հայտարարագիրը շրջակա միջավայրի ստանդարտների և առողջապահական հիմնարկների մասին:

Վիեննայի հայտարարագիրը շրջակա միջավայրի ստանդարտների մասին առողջապահական հիմնարկների համար

Մենք՝ մասնակիցներս անվտանգ արտադրանքներին և պրակտիկաներին նվիրված “CleanMed Europe” առաջին միջազգային առողջապահական կոնգրեսի, որը կայացավ Վիեննայում 2004թ. հոկտեմբերի 6-8, հայտարարում ենք մեր պարտավորվածության մասին իրականացնելու հետևյալ սկզբունքները:

Շարունակաբար աճող աղտոտվածությունը և բնական էկոհամակարգերին դրա պատճառած վնասը լրջորեն վտանգում է համայն մարդկության առողջությունը: Առողջապահական հիմնարկների աշխատանքը նպաստում է շրջակա միջավայրի և առողջության վրա բացասական ազդեցություններին: Հասարակությունն առողջապահական հիմնարկների մասնագետներից ակնկալում է, որ նրանք ոչ միայն կբուժեն հիվանդներին, այլև կկանխեն հիվանդություններն առողջության պահպանման ընթացքում: Մենք գիտակցում ենք, որ անհրաժեշտ է առողջապահությունն այնպես ձևափոխել, որ այն լինի

էկոլոգիապես անվտանգ և դադարի հասարակության և շրջակա միջավայրի համար վտանգի աղբյուր լինելուց:

Շրջակա միջավայրի պաշտպանությունը պետք է հիմնական սկզբունք լինի առողջապահական հիմնարկների համար: Շրջակա միջավայրի վերաբերյալ նկատառումները պետք է կառավարման հիմնական սկզբունքը լինեն և հաշվի առնվեն բոլոր որոշումներում, ընթացակարգերում և գործունեության ընթացքում՝ որևէ վնաս չհասցնելով բուժման որակին: Դա կնպաստի այն բանին, որ առողջապահության մասնագետները կպաշտպանեն անհրաժեշտ էկոլոգիական փոփոխությունները հասարակության մեջ և կտան ավելի անվտանգ ապրելակերպի օրինակներ:

Մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունն առողջապահական հիմնարկների բուժանձնակազմի ու հիվանդների համար և աղտոտվածությունից խուսափելը համարում ենք գլխավոր ներդրումը աշխատակիցների, հիվանդների և այցելուների առողջության ու բարեկեցության հարցում:

Շրջակա միջավայրի պարտադիր ստանդարտներն առողջապահության մեջ պետք է հաստատվեն բոլոր համապատասխան թեմաների և տարածքների առումով, ներառելով հետևյալը՝

- Կիրառել շրջակա միջավայրի խիստ չափորոշիչներ մատակարարների և արտադրանքի ընտրության համար «կանաչ բուժում»:
- Հնարավորության դեպքում, չվնասելով առողջապահության որակը և անվտանգությունը, ոչ բնական միացություններից ստացած արտադրատեսակները, ինչպես օր.՝ պոլիվինիլ քլորիդը, ծանր մետաղների կայուն թունաքիմիկատները փոխարինել այնպիսիններով, որոնք մտնում են բնական նյութերի ցիկլերում /հեշտությամբ քայքայվում են բնության մեջ/:
- Օգտագործել օրգանական եղանակով աճեցրած և օրինական ճանապարհով ձեռք բերված սնունդ, որը կկազմի ոչ պակաս, քան ամբողջ սննդարար արժեքի 30 %-ը:
- Օգտագործել նոր աղբյուրներից ստացվող էներգիա:
- Կրճատել որպես արդյունավետ օգտագործման աղբյուրներ նյութերի, ապրանքների, էներգիայի և ջրի սպառումը:
- Միշտ նկատի ունենալ միանվագ օգտագործման առարկաների փոխարինման և բժշկական նյութերի կրկին մանրէազերծման հնարավորությունը:
- Կառուցել և նորացնել բուժհիմնարկները որպես թույներից ազատ, քիչ էներգիա սպառող, կանաչ դիզայնի և կազդուրման սկզբունքներին հետևող:
- Պահպանել առողջապահական հիմնարկների կանաչ տարածքները էկոլոգիապես առողջ վիճակում և վերածել դրանք կազդուրիչ շրջակա միջավայրերի: Մարդկանց իրազեկել դրանց կարևորության մասին:
- Տեղեկացնել աշխատակիցներին, հիվանդներին և հանրությանը շրջակա միջավայրին առնչվող բոլոր ասպեկտների և ձեր հիմնարկի գործունեության մասին:
- Մշակել շրջակա միջավայրի մատչելի քաղաքականություն, կազմել շրջակա միջավայրի ծրագրեր՝ նշելով նպատակները և միջոցները, ստեղծել բնապահպանական կազմակերպություն և օգտագործել շրջակա միջավայրի կառավարման համակարգեր դրանց իրականացման համար:
- Շրջակա միջավայրի և առողջության պաշտպանությունը ազգային և միջազգային քաղաքականության գլխավոր նպատակներն են: Դա նկատի ունենալով, Եվրոմիությունը և ազգային կառավարությունները պետք է հաստատեն և ընդարձակեն անհրաժեշտ իրավական շրջանակները հասարակության և առողջապահական հիմնարկներում պարտադիր շրջակա միջավայրի ստանդարտների համար:

Թարգմանվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից: